ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում անցկացրած խորհրդակցության ընթացքում նախարարի զեկույցը

Մեծարգո պարոն Նախագահ,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ղեկավար կազմը Ձեզ է ներկայացնում նախարարության վերջին 2-3 տարիներին իրականացրած աշխատանքներն ու դրանց արդյունքները, ինչպես նաև առկա խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ առաջիկա անելիքները:

Նախ կցանկանայի անդրադառնալ մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներից՝ աղքատության և գործազրկության հետ կապված հիմնախնդիրներին՝ դիտարկելով խնդիրը սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքների և անելիքների համատեքստում:

Ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող որևէ ծրագիր չկրճատվեց, ավելին՝ ավելացվեցին հիմնական սոցիալական ծրագրերին ուղղվող ֆինանսական միջոցներն ու կենսաթոշակների, նպաստների և նվազագույն աշխատավարձի չափերը:

ՀՀ 2014թ. պետական բյուջեով սոցիալական պաշտպանության ոլորտին հատկացվել է 362.0 մլրդ. դրամ կամ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 29 %-ը:

Աղքատության և գործազրկության հաղթահարման գործում սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական գործիքները զբաղվածության ոլորտում իրականացվող ակտիվ ծրագրերն են և սոցիալական տրանսֆերտները՝ կենսաթոշակներ, նպաստներ, դրամական օգնություններ և այլն: Նախարարության գերխնդիրը՝ ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցները խիստ նպատակային

ծրագրերին ուղղելը և շահառուներին առավելագույն հասցեական տրամադրելն է: Բնականաբար, նոր աշխատատեղերի ստեղծումը նախարարության անմիջական գործառույթը չէ, սակայն իրականացվում է աշխատաշուկայում առկա իրավիճակի վերլուծություն, առկա թափուր աշխատատեղերի, դրանք ներկայացնող գործատուների և աշխատանք փնտրող անձանց հաշվառում, ինչն առաջիկա տարվա ընթացքում թույլ կտա իրականացնել զբաղվածության ակտիվ քաղաքականություն: Խնդիրը նախ և առաջ վերաբերում է ներկայիս աշխատաշուկայում առկա կառուցվածքային գործազրկությանը (երբ աշխատանք փնտրողի մասնագիտությունը աշխատաշուկայում պահանջարկ չունի), կրկնվող թափուր աշխատատեղերի հնարավոր համալրմանը, երիտասարդների մոտ գործազրկության բարձր մակարդակին, հաշմանդամների զբաղվածությանը: Այստեղ հատկապես կարևորվում է նախարարության կողմից վարվող զբաղվածության քաղաքականությունը. նախատեսված մասնագիտական ուսուցման, աշխատանքային պրակտիկայի կազմակերպման, անմրցունակ անձին աշխատանքի ընդունելու դեպքում գործատուի ծախսերի փոխհատուցման ծրագրերը ձեռք են բերում առարկայական նշանակություն:

Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2013թվականից գործատուները յուրաքանչյուր ամիս իրենց վարձու աշխատողների համար հաշվետվություն են ներկայացնում բացառապես էլեկտրոնային եղանակով և նախարարությանը հասանելի են անձնավորված հաշվառման համակարգի տվյալները, նախատեսել ենք իրականացվող ծրագրերի գնահատման հստակ ցուցանիշ՝ **կայուն զբաղվածության գործակից,** ինչը նշանակում է, որ ծրագրում ընդգրկված անձը ծրագրի ավարտից կամ, որոշ դեպքերում, նաև ծրագրի ընթացքից սկսած առնվազն 6 ամիս պետք է ապահովված լինի աշխատանքով՝ ստանալով աշխատավարձ:

Էական նշանակություն ունի նաև աշխատավարձերի չափերի խնդիրը, քանի որ աշխատանք ունենալը դեռևս չի նշանակում աղքատ չլինել և «աշխատող աղքատների» խնդրի լուծումը ևս կարևորագույն նշանակություն ունի, այդ թվում՝ աշխատանքի

ընդհանուր արտադրողականության բարձրացման տեսանկյունից: Այս առումով 2013թ. իրականացվեց աշխատավարձերի ոլորտի համակարգային ռեֆորմ և երկար սպասված լուծման կարիք ունեցող խնդիրը 2014թ. հուլիսի 1-ից համակարգային լուծում կստանա: Ընդունվեց շուրջ 3 տասնյակ օրենքներից բաղկացած օրենսդրական փաթեթ, որը նաև նշանակում է, որ պետությունը զգալիորեն մեծացրեց իր կարգավորիչ դերն այս բնագավառում, քանի որ մինչև այս համակարգի ներդրումը պետության գործիքը աշխատավարձի բնագավառում միայն նվազագույն աշխատավարձն էր: Այս դեպքում, ամբողջ պետական ծառայության համակարգված աշխատավարձերի պարագայում, երբ կտրուկ բարձրանում է պետական ծառայությունում աշխատելու մոտիվացիան և մրցունակությունը (որը ենթադրում է որակյալ կադրերի ներգրավում համակարգ), սա թելադրելու է մասնավորին ևս բարձրացնել աշխատավարձերը, հատկապես միջին օղակներում: Գաղտնիք չէ, որ մասնավոր հատվածում կա աշխատավարձերի էական տարբերակվածություն. իրականում գործատուները բարձր աշխատավարձեր վճարում են թոփ-մենեջմենտին:

Մյուս կարևոր խնդիրը. 2014թ. նախատեսում ենք **նվազագույն աշխատավարձի չափի սահմանման մեթոդիկայի** հաստատում, քանի որ այն այսուհետ հիմք է հանդիսանալու երկրում իրականացվող ամբողջ աշխատավարձային քաղաքականության համար: Պետք է հաշվի առնել խնդրի բոլոր կողմերը. գործատուների բեռը, ստվեր չմղելու հանգամանքը, աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ նվազագույն պահանջները և պետության ֆինանսական հնարավորություններն ու առաջնահերթությունները: Մյուս կարևոր, լրացնող հանգամանքը սոցիալական երաշխիքների համակարգն է. այսօր արդեն 210.000 պետական ծառայողներ օգտվում են սոցիալական փաթեթից, որի հատկապես առողջական խնդիրներին ուղղված միջոցներն առարկայական խնդիրներ են լուծում՝ հնարավորություն տալով միջին եկամուտներ ունեցող անձանց օգտվել առողջապահական լուրջ ծառայություններից:

Աղքատության և գործազրկության հաղթահարման գործում սոցիալական պաշտպանության ոլորտի հետագա քաղաքականությունը մշակելու, անելիքները հստակեցնելու նպատակով կատարվել են իրավիճակի համեմատություններ այլ երկրների հետ, վերլուծություններ տարբեր ցուցանիշներով, մասնավորապես՝ ՀՆԱ-ի աճի, նվազագույն աշխատավարձի, աղքատության, սոցիալական տրանսֆերտների, գործազրկության մակարդակի փոխազդեցությունների վերաբերյալ:

Սոցիալական քաղաքականության հաջորդ կարևորագույն ուղղությունը կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն է, որի նպատակն է՝

1. ներդնել բազմաստիճան կենսաթոշակային համակարգ, ներառյալ՝ կուտակային բաղադրիչը, դրա միջոցով ապահովելով կենսաթոշակային ապահովության համակարգի երկարաժամկետ ֆինանսական կայունությունը և կենսաթոշակների ու աշխատավարձերի միջև կապի ստեղծումը,
2. կատարելագործել պետական կենսաթոշակային ապահովության համակարգը՝ նպատակ ունենալով կենսաթոշակների չափերի շարունակական բարձրացմամբ նախ նվազեցնել, ապա բացառել աղքատությունը և աղքատության ռիսկը կենսաթոշակառուների շրջանում:

Հենց այս խնդրի լուծմանն էր ուղղված կենսաթոշակների չափի վերջին բարձրացումը, որի արդյունքում կենսաթոշակը հաշվարկելու կարգի փոփոխության և լրացուցիչ հատկացված 29 մլրդ դրամ միջոցների հետևանքով 2014թ. հունվարի 1-ից շուրջ 5 անգամ կկրճատվի ծայրահեղ աղքատության շեմից ցածր կենսաթոշակ ստացողների թիվը (2013թ՝ 68 հազար, 2014թ՝ 12 800), շուրջ 40 տոկոսով՝ աղքատության ստորին շեմից ցածր կենսաթոշակ ստացողների թիվը (230.000-ից՝ 138.300), և շուրջ 12 տոկոսով՝ աղքատության վերին շեմից ցածր ստացողների թիվը (333.000-ից՝ 292.400 անձ):

Ներդրված <Էլեկրոնային կենսաթոշակ> համակարգը, ի լրումն սուբյեկտիվության աննախադեպ նվազեցման, վերահսկողության մեծ հնարավորությունների՝ ունի բազմատեսակ վերլուծությունների, առցանց եղանակով օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու և որոշումներ կայացնելու կարողություններ: Կատարված մեծածավալ աշխատանքների արդյունքում այսօր ունենք արդիական համակարգ, գործիքներ, ինչն էականորեն ազդում է գործընթացների թափանցիկության և համակարգի նկատմամբ վստահութան աճի վրա:

Հաջորդ կարևոր ուղղությունը ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն է, ինչը հնարավորություն է տալիս սոցիալական տարբեր ծառայություններ մատուցել մեկ պատուհանի միջոցով, անձի կամ ընտանիքի գնահատված կարիքի հիման վրա: Կայանում է սոցիալական աշխատանքի և սոցիալական աշխատողի ինստիտուտը, ձևավորվել է քաղաքացու կամ ընտանիքի սոցիալական վիճակը բնութագրող տվյալների շտեմարան՝ սոցիալական բանկ, հանրապետության տարբեր տարածաշրջաններում արդեն իսկ գործում են 19 կենտրոններ, առաջիկա 2-3 տարիների ընթացքում ամբողջ հանրապետությունում կունենանք 55 կենտրոն:

Մյուս ոլորտներում ևս կատարվել են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես՝ աշխատանքներ են տարվում հաշմանդամություն նոր՝ սոցիալական մոդելին անցնելու ուղղությամբ, տարեցների ոլորտում մշակվում են նոր, այլընտրանքային սոցիալական ծառայություններ, պետության կողմից երաշխավորված նվազագույն փաթեթ, ըստ ցանկության՝ նաև վճարովի և համավճարով լրացուցիչ ծառայություններ:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի գլխավոր կարգախոսը՝ «երեխան պետք է ապրի ընտանիքում», իրականացվում է պետական խնամքի հաստատությունների բեռնաթափման, այլընտրանքային ծառայությունների ստեղծման, ընտանիքների աջակցության և մի շարք այլ ծրագրերի միջոցով:

Սոցիալական պաշտպանության համակարգի պետական ծրագրերի արդյունավետության և որակի գնահատման նպատակով ներդրվել է ծառայությունների մոնիթորինգի և գնահատման նոր համակարգ, 2014-ին նախատեսվում է մշտադիտարկել և առաջարկություններ ներկայացնել 14 ծրագրերի վերաբերյալ:

Ասելիքները շատ են, դրանք առավել մանրամասն կներկայացնեն նախարարի տեղակալները:

Կցանկանայի միայն ավելացնել, որ օգտագործելով համակարգի ողջ ներուժը, ստեղծելով արդիական համակարգեր, իրավիճակային, այսրոպեական որոշումները փոխարինելով սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնախնդիրների համակարգային լուծումներով, հասել ենք այն փուլին, երբ անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել մեր երկրի, որպես սոցիալական պետության, սոցիալական պաշտպանության համակարգի մոդելը: